

## ԲԵՄԻ ՎՐԱ ԵՎ ԲԵՄԻՑ ԴՈՒՐՍ

Միեր Մկրտչյանը, Մկրտչյան Միերը կոչված էր այս երկրի՝ Աստծու այս թատրոնի մեջ բնակիչներից մեկը լինել. չլիներ դրա- մատուրգիան, չլիներ բենը՝ Միերը այլ կերպ էր լինելու այդ մեջը, ասենք որպես մի ոմն Պոլոզ Մուկուց, մի ոմն Պըլը-Պուղի կամ Վիլյամ Սարոյան, մարդ, բնակիչ ում ներկայությունն ու ընթացքը բարություն, սեր ու վստահություն է ցողում բոլոր-բոլորի վրա, մարդիկ արբանանում են այլ ու լավ տրամադրությամբ, դեպքերին ու դեմքերին շատ էլ մեջ նշանակություն չեն տալիս, կարողանում են իրեշավորը ծիծաղելի տեսնել, կարգուկանոնի պարտադրաժից իրենց դուրս ու ազատ են տեսնում: Եվ Աստծու այս բեմում Միերը թերևս ավելի մեջ լիներ, քան եղավ թատրոնի բեմում: Ինքը Աստծու մի մեջ ստեղծվածք՝ իրեն հժվար էր տեղավորում մարդու մեր գործերում ու ստեղծագործություններում - կերպարների կա- ղապարները փշուր-փշուր էին լինում, կերպարի հանդերձը ճռուալով պատռվում էր նրա վրա, կառույցը նրա մուտքով քան- դութարափի էր լինում և վերաշինվում ու գմբեթավորվում ոչ այն տեսքով, ինչ տեսքով ենթադրելի էր:

Իր համար ինքն էր գրելու և գրեց. բեմի վրա և բեմից դուրս՝ նրա գործն ու կյանքը նրա սեփական ու մեջ ստեղծագործությունն է: Շարունակվեր այդ ստեղծագործությունը՝ այսօր մեր միջավայրն այսքան խեղճ ու չար չէր լինի, շարունակվեր այդ կյանքը՝ աշխար- հի համար մենք ավելի լավ կլինենք, մեր հասակները մի քիչ ավելի բարձր, մեր աչքերը մի քիչ ավելի խելացի, մեր հոգիները թերևս և մեր սրտերը բաց կլինեն:

Բայց մեծերը ինչո՞ւ են հեռանում մեջ փլուզումներից առաջ, ինչո՞ւ են մեզնից երես դարձնում. ի՞նչ է, մեծի նրանց պարտքը չէ՞ - մեր ծանր օրերին մեր մեջ լինել, մեր՝ որ իրենց ստեղծածն ենք, խուճապային մեր փախուստի գլխին լինել և մեր խուճապը դարձնել կանոնավոր նահանջ ու երթ. թէ՞ մեր իսկ չարության դեմ ինքներս ենք արժանի մնալ մենակ, առանց մեծերի: